ԿԱՐԾԻՔ

Ալիրեզա Փարվիզ Ադկանիանի «ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» թեմայով

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրախոսության ներկայացված ատենախոսության արդիականությունը պայմանավորված է պարենային անվտանգության աճող կարևորությամբ, որը հանդիսանում է ազգային և տարածաշրջանային զարգացման ռազմավարության անբաժան բաղադրիչ: Վերջին տասնամյակներում համաշխարհային պարենային համակարգը ավելի ու ավելի է ենթարկվում տնտեսական, քաղաքական, բնապահպանական և տեխնոլոգիական մարտահրավերների: Կլիմայի փոփոխությունը, աշխարհաքաղաքական շահերի բախումը, մատակարարման շղթաների խափանումները և շուկայի անկայունությունը զգալիորեն մեծացրել են պարենային անվտանգության ռիսկերը ամբողջ աշխարհում:

COVID-19 համավարակը ակնհայտ դարձրեց միջազգային պարենային մատակարարման ցանցերի խոցելիությունը և ընդգծեց տարածաշրջանային համագործակցության ավելի արդյունավետ մեխանիզմների անհրաժեշտությունը: Անվտանգ և մատչելի սննդի հասանելիության ապահովումը դարձել է բոլոր երկրների կառավարությունների և միջազգային կազմակերպությունների հիմնական առաջնահերթություններից մեկը: Հայաստանի համար պարենային անվտանգությունը ներկայացնում է հատկապես կարևոր խնդիր՝ երկրի սահմանափակ գյուղատնտեսական ռեսուրսների, ներմուծումից կախվածության և աշխարհաքաղաքական սահմանափակումների պատճառով:

Այս պայմաններում տնտեսական և գյուղատնտեսական գործընկերների դիվերսիֆիկացիան դառնում է ռազմավարական անհրաժեշտություն ինչպես Իրանի Իսլամական հանրապետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար: Իրանը Հայաստանի բնական գործընկերն է իր աշխարհագրական դիրքի, համատեղ տնտեսական շահերի և գյուղատնտեսական զգալի ներուժի շնորհիվ: Հայաստանի և Իրանի միջև երկկողմ համագործակցության զարգացումը կարող է նպաստել պարենային մատակարարման խոցելիության նվազեցմանը և տարածաշրջանային դիմադրողականության բարձրացմանը երկու պետությունների համար:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, գիտական հետազոտությունները, նվիրված պարենային անվտանգության խնդիրներին և այս բնագավառում երկու պետությունների միջև համագործակցությանը, բավականին սակավաթիվ են: Կատարված հետազոտությունների մեծ մասը կենտրոնանում է կամ ազգային պարենային անվտանգության հարցերի, կամ տարածաշրջանային ինտեգրման գործընթացների վրա՝ անտեսելով պարենային անվտանգությունը: Այսպիսով, սույն հետազոտությունը բավականին արդիական է, քանի որ վերլուծում է պարենային անվտանգության տնտեսական, ինստիտուցիոնալ և կառավարչական մեխանիզմները, առաջարկում կայուն պարենային անվտանգության համակարգի զարգացմանն ուղղված մեխանիզմներ: Ուսումնասիրությունը նաև արդիական է, քանի որ այն ներառում է ինչպես պարենային անվտանգության, այնպես էլ միջազգային տնտեսական համագործակցության հիմնախնդիրները: Ավելին, համաշխարհային գյուղատնտեսական շուկաներում աճող անորոշությունը պահանջում է նոր կառավարման մոտեցումների և քաղաքականության գործիքների մշակում:

Սույն հետազոտության շրջանակներում առաջարկվող մոդելներն ու ցուցանիշները նպատակ ունեն համապատասխան քաղաքականություն մշակողներին տրամադրել նոր գործիքակազմ առկա խնդիրները և մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ: Սույն հետազոտության արդյունքները կարող են աջակցել գյուղատնտեսական քաղաքականության, առևտրային կապերի զարգացման և տարածաշրջանային զարգացման պլանավորման գործընթացներին: Հետևաբար, գրախոսության ներկայացված ատենախոսության թեման գիտականորեն նշանակալի է և կարևոր

տնտեսական կայունության, սոցիալական բարեկեցության և տարածաշրջանային անվտանգության համատեքստում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գրախոսության ներկայացված ատենախոսության հիմնական նպատակն է առաջարկություններ անել երկրների միջև համագործակցության համատեքստում՝ սննդի անվտանգության կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ:

Նախանշված նպատակին հասնելու համար ատենախոսության շրջանակներում առաջադրվել են հետևյալ հետազոտական խնդիրները.

- Ուսումնասիրել Իրանի Իսլամական Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում սննդի անվտանգության ապահովման խնդիրները:
- Հիմնվելով Իրանի Իսլամական Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում սննդի անվտանգության ապահովման նմանատիպ խնդիրների վրա՝ մշակել անվտանգության ոլորտում երկրների համագործակցային կառավարման շրջանակ:
- Մշակել սննդի անվտանգության ապահովման սպառնալիքների հիերարխիա՝ նպատակ ունենալով պարզաբանել կառավարման ուղղությունները վերազգային, ազգային և տեղական մակարդակներում:
- Առաջարկել անվտանգության կառավարման նպատակների ցուցանիշներ՝ նպաստելով սննդի անվտանգության և մատչելիության բարելավմանը, ինչպես նաև սննդի սպառման մշակույթի բարելավման վերաբերյալ կառավարչական որոշումների կայացմանը:
- Ներկայացնել սննդի անվտանգության ապահովման շահառուների շրջանակ՝ դրանում արտացոլելով կառավարման առաջընթացի ցուցանիշները՝ ըստ շահառուների առանձին խմբերի,
- Առաջարկել կառավարման ցիկլային մոտեցում՝ ստեղծելով անվտանգության սպառնալիքները կանխելու համար կառավարչական որոշումներ կայացնելու հնարավորություն:
- Մշակել սննդի անվտանգության կառավարման մոտեցումներ, որոնք թույլ կտան պարբերաբար վերագնահատել անվտանգության ներուժը երկրների միջև համագործակցության համատեքստում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության նորույթը երկրների միջև համագործակցության համատեքստում պարենային անվտանգության կառավարման բարելավման

առաջարկությունների ներկայացումն է: Մասնավորապես՝

1. Բացահայտվել են Իրանի Իսլամական Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգության ապահովման ընդհանուր խնդիրները, և դրա հիման վրա ներկայացվել է երկրների համագործակցային կառավարման շրջանակ:
2. Առաջարկվել է պարենային անվտանգության սպառնալիքների հիերարխիա, որի արդյունքում պարզաբանվել են կառավարման նպատակները և դրանց հասնելու նպատակային արդյունքները վերազգային, ազգային և տեղական մակարդակներում:
3. Մշակվել են պարենային անվտանգության կառավարման նպատակների ցուցանիշներ, որոնք հնարավորություն են տալիս կայացնելու կառավարման որոշումներ պարենային անվտանգության և մատչելիության, ինչպես նաև սննդի սպառման մշակույթի բարելավման վերաբերյալ՝ ըստ շահառուների տարբեր խմբերի:
4. Առաջարկվել է կառավարման ցիկլային մոտեցում, որը հնարավորություն է տալիս կայացնելու կառավարչական որոշումներ՝ անվտանգության սպառնալիքները կանխելու և պարբերաբար վերագնահատելու պարենային անվտանգության ապահովման ներուժը երկրների միջև համագործակցության համատեքստում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթները, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև կիրառված մեթոդաբանությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Պարենային անվտանգություն, սահմանումներ և տեսական հիմքեր»** գլխում ներկայացված են պարենային անվտանգության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Մանրամասն քննարկվել է «պարենային անվտանգություն» հասկացության ձևավորումը ու զարգացումը՝ նախանշելով այն, թե

ինչպես է ժամանակի ընթացքում այն վերափոխվել՝ դառնալով կարևորագույն տնտեսական, սոցիալական, քաղաքական և նույնիսկ ազգային անվտանգության քաղաքականության բաղադրիչ: Հատուկ ուշադրություն է դարձվել միջազգային կազմակերպությունների, հատկապես Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO-ի) կողմից առաջարկված մոտեցումներին, որոնց համաձայն սննդային անվտանգությունը ներառում է ոչ միայն սննդամթերքի բավարար քանակությունը, այլև դրա հասանելիությունը, մատչելիությունը, անվտանգությունն ու կայունությունը:

Ատենախոսության շրջանակներում սննդային անվտանգությունը դիտարկվել է ոչ միայն ազգային տնտեսության շրջանակներում, այլ նաև միջպետական համագործակցության համատեքստում: Միաժամանակ, վերլուծվել է այս խնդրի հետ կապված միջազգային փորձը, տարածաշրջանային համագործակցության ծրագրերը և միջազգային կազմակերպությունների դերակատարությունը: Հաշվի առնելով, որ ժամանակակից աշխարհում որևէ պետություն չի կարող լիովին ապահովել իր պարենային անվտանգությունը, հատկապես փոքր տնտեսությունների դեպքում, պետությունների միջև համագործակցությունը դառնում է ոչ թե ցանկալի, այլ անհրաժեշտ պայման:

Երկրորդ՝ **«Իրան-Հայաստան պարենային անվտանգության սպառնալիքների բացահայտումներ»** գլխում գնահատվել է Հայաստանի և Իրանի պարենային անվտանգության ներկա վիճակը, վերլուծվել են հիմնական մամարտահրավերները և ռիսկերը: Այս գլխի շրջանակներում հեղինակի կողմից փորձ է արվել բացահայտել տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, բնապահպանական և քաղաքական գործոնները, որոնք կարող են ազդել երկու երկրների պարենային համակարգերի կայունության վրա: Բացի այդ, վերլուծվել են ՀՀ պարենային ինքնաբավության մակարդակը, գյուղատնտեսական արտադրության առանձնահատկությունները, ներմուծումից կախվածությունը, աղքատության մակարդակը և վերջին տարիների ճգնաժամերի հետևանքները: Արդյունքում բացահայտվել է Հայաստանի սննդային անվտանգության հիմնական խոցելի կողմերը, այն է՝ սահմանափակ բնական ռեսուրսները, փոքր ներքին շուկան, արտաքին մատակարարումներից կախվածությունը և տարածաշրջանային քաղաքական ռիսկերը: Առանձնահատուկ ուշադրություն է

դարձվում COVID-19 համավարակի և Արցախյան պատերազմի ազդեցությանը, որոնք բացահայտել են պարենային համակարգի որոշակի թույլ կողմերը: Իրանի դեպքում քննարկվել են տնտեսական պատժամիջոցների, բարձր գնաճի, ջրային ռեսուրսների սակավության, կլիմայական փոփոխությունների և գյուղատնտեսական արտադրողականության խնդիրները: Հետազոտությունները ցույց են տվել, որ Հայաստանի և Իրանի խնդիրները շատ դեպքերում փոխկապված են, ինչը հնարավորություն է ստեղծում համագործակցության միջոցով նվազեցնելու ռիսկերը:

Երրորդ՝ **«Պարենային անվտանգության կառավարման հիմնախնդիրները երկրների համագործակցության համատեքստում»** գլխում հիմնավորվել է երկու երկրների միջև կայուն տնտեսաքաղաքական կապերի կարևորությունը՝ շեշտադրելով ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև գիտահետազոտական ծրագրերի, կրթական նախաձեռնությունների, լոգիստիկ ենթակառուցվածքների, տեխնոլոգիական փոխանակման և ինստիտուցիոնալ համագործակցության հնարավորությունները: Այսպիսով, պարենային անվտանգությունը դիտարկվում է որպես բազմաշերտ համակարգ, որտեղ տնտեսական հարաբերությունները միայն մեկ բաղադրիչն են:

Գլխի շրջանակներում առաջարկվել է կառավարման հայեցակարգ, ըստ որի Հայաստանը և Իրանը պետք է դիտարկվեն որպես փոխկապակցված տնտեսական տարածք, որտեղ հնարավոր է համատեղ պլանավորում, ռիսկերի գնահատում և ռեսուրսների ավելի արդյունավետ բաշխում: Այս մոտեցումը փորձում է սննդային անվտանգությունը դուրս բերել բացառապես ազգային քաղաքականության շրջանակներից և տեղափոխել տարածաշրջանային համագործակցության հարթություն:

Միաժամանակ, առաջարկվել է սննդային անվտանգության արդյունավետության գնահատման ցուցանիշների (KPI) համակարգ և կառավարման ցիկլային մոդել, որոնք նախատեսված են որոշումների ընդունման, վերահսկման և գնահատման գործընթացները բարելավելու համար:

Ատենախոսության վերջում՝ «**Եզրակացություններ** և առաջարկություններ» բաժնում ներկայացված են ատենախոսության գլուխների հիմնական դրույթները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունն ուսումնասիրում է բավականին արդիական և գործնական նշանակություն ունեցող խնդիր, սակայն աշխատանքում առկա են մի շարք թերություններ, որոնք շարադրված են ստորև:

1. Նախ, մեթոդաբանական տեսանկյունից աշխատանքում բավարար չափով չեն ներկայացվել կիրառված հետազոտական մեթոդների ընտրության հիմնավորումները և դրանց կիրառման ընթացակարգերը: Մասնավորապես, հեղինակը նշում է, որ վիճակագրական տվյալների վերլուծությունից բացի, հետազոտության շրջանակներում իրականացվել են խորհրդակցություններ փորձագետների հետ, անցկացվել են հարցազրույցներ, սակայն աշխատանքում ներկայացված չեն փորձագիտական հարցումների, հարցազրույցների իրականացման մեխանիզմները, հարցաթերթիկները, ընտրանքի ձևավորման սկզբունքները և արդյունքների հավաստիության ապահովման գործիքները, ինչը որոշ չափով դժվարացնում է ստացված արդյունքների գնահատումը:
2. Ատենախոսության գիտական նորույթին վերաբերող դրույթները ներկայացված են բավականին լայն, ոչ կոնկրետ: Երկրորդ և չորրորդ նորույթներն, ավելի շուտ, առաջարկություններ են:
3. Կարծում ենք, որ հեղինակի կողմից մշակված մոդելների, ցուցանիշների և կառավարման մեխանիզմների նորարարական բնույթը առավել համոզիչ կլիներ, եթե ներկայացվեին դրանց համեմատական առավելությունները նախկինում կիրառված լուծումների նկատմամբ:
4. Հետազոտության ընթացքում ձևակերպված մի շարք եզրակացություններ հիմնված են տրամաբանական դատողությունների և փորձագիտական գնահատումների վրա, սակայն դրանք ավելի համոզիչ կլինեին, եթե հիմնավորված լինեին համապատասխան ցոիցանիշների հաշվարկով, վիճակագրական տվյալների վերլուծությամբ և այլն: Միաժամանակ, աշխատանքը կշահեր, եթե հեղինակը գնահատեր առաջարկված կառավարման մոդելների, համագործակցության մեխանիզմների արդյունավետությունը:

5. Ատենախոսության շրջանակներում առաջարկվել է պարենային անվտանգության արդյունավետության գնահատման ցուցանիշների (KPI) համակարգ և կառավարման ցիկլային մոդել, որոնք նախատեսված են որոշումների ընդունման, վերահսկման և գնահատման գործընթացները բարելավելու համար: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակն իրականացներ այդ գործիքների միջոցով հաշվարկ և առաջարկեր չափելի հստակ KPI-եր, քանի որ վերջիններս հենց դրանով են տարբերվում նմանատիպ այլ ցուցանիշներից:
6. Կարծում ենք ատենախոսությունը միայն կշահեր, եթե հեղինակը ԻԻՀ և ՀՀ պարենային ինքնաբավության, ներմուծման, արտահանման և այլ վիճակագրական տվյալները վերլուծեր ավելի երկար դինամիկ շարքերի համար, քան 3-4 տարին, ինչը վիճակագրական վերլուծությունը կդարձներ ավելի համոզիչ, իսկ արդյունքները ավելի հիմնավոր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության գիտականությունը, ինչպես նաև արդյունքների տեսական ու կիրառական նշանակությունը: Ալիրեզա Փարվիզ Ադկանիանի «Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համագործակցային հեռանկարները պարենային անվտանգության կառառավարման համակարգում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ամբողջական և պատշաճ մակարդակով իրականացված հետազոտություն է, որի շրջանակում առաջարկվել են ԻԻՀ և ՀՀ համագործակցության բարելավմանն ուղղված առաջարկություններ: Աշխատանքում իրականացված ակադեմիական գրականության ուսումնասիրությունը, օգտագործված տեսական և գործնական մոտեցումները էապես հիմնավորված, համոզիչ և ընդունելի են:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են 8 գիտական հոդվածներում:

Ատենախոսության սեղմագիրը համարժեքորեն արտացոլում է աշխատանքի բովանդակությունն ու արդյունքները:

Այսպիսով, Ալիրեզա Փարվիզ Ադկանիանի «Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համագործակցային հեռանկարները պարենային անվտանգության կառառավարման համակարգում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԻՄԱԽՈՍ՝

ՀՊՏՀ Բիզնես վարչարարության ամբիոնի վարիչ
տ.գ.թ., դոցենտ՝ **Մ. Ա. Սահակյան**

Մարիա Արմենակի Սահակյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝ **Ն. Հ. ԴԱՐԲԻՆՅԱՆ**

24 հունիս 2026 թ.